**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՈՒՂԵԿՑՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10»**

ք. Երևան «21» հունիսի 2018 թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արամ Կոստանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը և մատուցել նույն հավելվածով նախատեսված ծառայությունը (այսուհետ՝ միասին Պայմանագրի առարկա), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Պայմանագրի առարկան և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Պայմանագրի առարկան պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Պայմանագրի առարկայից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Պայմանագրի առարկա՝

ա) պահանջել հատուցելու Պայմանագրի առարկայի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Պայմանագրի առարկան՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Պայմանագրի առարկան պայմանագրին համապատասխանող որակի Պայմանագրի առարկայով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Պայմանագրի առարկայի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի Պայմանագրի առարկա, ապա՝

ա) պահանջել լրացնելու Պայմանագրի առարկայի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Պայմանագրի առարկայից և դրա համար վճարելուց, իսկ եթե Պայմանագրի առարկայի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Պայմանագրի առարկա, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Պայմանագրի առարկան և հրաժարվել մնացած Պայմանագրի առարկաներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Պայմանագրի առարկաներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Պայմանագրի առարկայի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Պայմանագրի առարկայով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Պայմանագրի առարկայի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Պայմանագրի առարկա՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Պայմանագրի առարկան այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Պայմանագրի առարկա, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Պայմանագրի առարկայի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Ջննել Պայմանագրի առարկան և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված Պայմանագրի առարկայի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Պայմանագրի առարկայից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Պայմանագրի առարկայի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Պայմանագրի առարկան ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Պայմանագրի առարկայի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Պայմանագրի առարկայի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Պայմանագրի առարկան:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Պայմանագրի առարկայի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Պայմանագրի առարկայի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Պայմանագրի առարկան:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել Պայմանագրի առարկան՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել Պայմանագրի առարկայի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Պայմանագրի առարկա:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի Պայմանագրի առարկա՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Պայմանագրի առարկայի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Պայմանագրի առարկան կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Պայմանագրի առարկան պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել Պայմանագրի առարկայի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 148 000 (մեկ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է ծառայողական մեքենաների պահեստամասերի արժեքը՝ 101 000 (մեկ հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ և դրանց տեղադրման ծառայության արժեքը՝ 47 000 (քառասունյոթ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է նաև պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Պայմանագրի առարկայի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Պայմանագրի առարկայի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Պայմանագրի առարկայի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Պայմանագրի առարկան ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Պայմանագրի առարկան Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Պայմանագրի առարկայի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Պայմանագրի առարկան Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Պայմանագրի առարկան համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Պայմանագրի առարկան չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Պայմանագրի առարկան կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Պայմանագրի առարկան համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Պայմանագրի առարկայի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված Պայմանագրի առարկայի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Պայմանագրի առարկայի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Պայմանագրի առարկա մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Պայմանագրի առարկայի ծավալների կամ ձեռք բերվող Պայմանագրի առարկայի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Պայմանագրի առարկայի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Պայմանագրի առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Պայմանագրի առարկայի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագրի առարկայի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագրի առարկայի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

### 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ | «ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ |
| Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68 | Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 46 |
| Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ | Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 163518012543 | Հ\Հ 1570017878010100 |
| ՀՎՀՀ 02602449 | ՀՎՀՀ 02240041 |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն՝ |
| ------------ Ա.Աբրահամյան | ------------ Ա. Կոստանյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*

*«21» հունիսի 2018 թ. կնքված N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10» ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Պայմանագրի առարկայի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ |
| **Ապրանքներ** | | | | | | | |
| 1 | 09211100/4 | Շարժիչի յուղ, 1 լ. 5w40 Զիգ ֆուլ սինթետիկ | Շարժիչի յուղ Հունդայի Սանտա Ֆե 2015 և Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենաների համար, 5w40 Զիգ ֆուլ սինթետիկ | հատ | 5000 | 2 | 10 000 |
| 2 | 34331300/1 | Ավտոմեքենայի պահեստամասեր- օդի զտիչ | Օդի զտիչ Հունդայի Սանտա Ֆե 2015 և Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենաների համար | հատ | 7500 | 2 | 15 000 |
| 3 | 34331300/2 | Ավտոմեքենայի պահեստամասեր- փեչի զտիչ | Փեչի զտիչ Հունդայի Սանտա Ֆե 2015 և Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենաների համար | հատ | 7500 | 2 | 15 000 |
| 4 | 34331300/5 | Դիմապակու խոզանակ, կոմպլեկտ | Դիմապակու խոզանակ (կոմպլեկտում 2 հատ) Հունդայի Սանտա Ֆե 2015 և Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենաների համար, | հատ | 3000 | 2 | 6 000 |
| 5 | 34331300/6 | Ավտոմեքենայի պահեստամասեր-ձգան | Ձգան Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի համար | հատ | 8500 | 2 | 17 000 |
| 6 | 34331300/7 | Ավտոմեքենայի պահեստամասեր- ձգանի վերջնամաս | Ձգանի վերջնամաս Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի համար | հատ | 11000 | 2 | 22 000 |
| 7 | 34331300/8 | Ավտոմեքենայի պահեստամասեր- կայունարարի ռետին հետևի | Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի համար Կայունարարի ռետին /հետևի/ | հատ | 5000 | 2 | 10 000 |
| 8 | 34331300/9 | Ավտոմեքենայի պահեստամասեր- ղեկայունակի պատյան | Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի համար ղեկայունակի պատյան | հատ | 5000 | 1 | 5 000 |
| 9 | 34331300/10 | Ավտոմեքենայի պահեստամասեր- համարի պլաստմասա | Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի համար համարի պլաստմասա | հատ | 1000 | 1 | 1 000 |
| | | **Ընդամենը** | | | | | **101 000** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ծառայություններ** | | | | | | | |
| 1 | 50111120/7 | Օդի զտիչի փոխարինում | Հունդայի Սանտա Ֆե 2015 և Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենաների օդի զտիչի փոխարինում | հատ | 500 | 2 | 1 000 |
| 2 | 50111120/8 | Փեչի զտիչի փոխարինում | Հունդայի Սանտա Ֆե 2015 և Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենաների փեչի զտիչի փոխարինում | հատ | 500 | 2 | 1 000 |
| 3 | 50111120/9 | Ձգանի փոխարինում | Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի ձգանի փոխարինում | հատ | 5000 | 2 | 10 000 |
| 4 | 50111120/10 | Ձգանի վերջնամասի փոխարինում | Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի Ձգանի վերջնամասի փոխարինում | հատ | 5000 | 2 | 10 000 |
| 5 | 50111120/11 | Կայունարարի ռետին հետևի փոխարինում | Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի կայունարարի ռետինի /հետևի/ փոխարինում | հատ | 1500 | 2 | 3 000 |
| 6 | 50111120/12 | Առջևի անիվների բացքի կարգավորում | Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի առջևի անիվների բացքի կարգավորում | հատ | 12000 | 1 | 12 000 |
| 7 | 50111120/13 | Հետևի անիվների բացքի կարգավորում | Հունդայի Սանտա Ֆե 2011 մեքենայի հետևի անիվների բացքի կարգավորում | հատ | 10000 | 1 | 10 000 |
| | | **Ընդամենը** | | | | **47 000** | |

Ապրանքների մատակարարումը և դրան ուղեկցող ծառայության մատուցումը կատարվելու է պատվերի հաստատումից հետո մինչև 01.07.2018թ. (ըստ պատվիրատուի փաստացի պատվերների՝ պատվերի տրամադրման օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում)

Ապրանքները տեղադրվելու են վաճառողի կողմից իրեն պատկանող սպասարկման սրահում:

**ԳՆՈՐԴ**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Ձեյթուն մ/6
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝
---------------- Ա.Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 46
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ\Հ 1570017878010100
ՀՎՀՀ 02240041
Տնօրեն՝
---------------- Ա. Կոստանդյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 21 » հունիսի 2018 թ. կնքված
N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

<table>
<tr><th colspan="16">Պայմանագրի առարկայի</th></tr>
<tr><th rowspan="2">հրավերով նախատեսված չափաբաժնի համարը</th><th rowspan="2">գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)</th><th rowspan="2">անվանումը</th><th colspan="13">դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում</th></tr>
<tr><th>հունվար</th><th>փետրվար</th><th>մարտ</th><th>ապրիլ</th><th>մայիս</th><th>հունիս</th><th>հուլիս</th><th>օգոստոս</th><th>սեպտեմբեր</th><th>հոկտեմբեր</th><th>նոյեմբեր</th><th>դեկտեմբեր</th><th>Ընդամենը</th></tr>
<tr><td>1</td><td>34331300</td><td>Ավտոմեքենայի պահեստամասեր</td><td colspan="12" rowspan="2">Վճարումն իրականացվելու է ապրանքների մատակարարումից հետո՝ երկկողմ ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:</td><td>101 000</td></tr>
<tr><td>2</td><td>50111120</td><td>Պահեստամասերի տեղադրման ծառայություն</td><td>47 000</td></tr>
</table>

**ԳՆՈՐԴ**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Գ.Ռիլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Ջեյթուն մ/ճ
Հ/Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝
________ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 46
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ\Հ 1570017878010100
ՀՎՀՀ 02240041
Տնօրեն՝
________ Ա. Կոստանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 3*
*«      »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ___________________________

______________________________

հվհհ __________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ___________________________

______________________________

հվհհ__________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«   »   «          » 2018 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «     » 20   թ. դուրս գրված N___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ Պայմանագրի առարկաները՝

| N | Մատակարարված Պայմանագրի առարկաների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Պայմանագրի առարկան հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Պայմանագրի առարկան ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«     »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը                                        Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20     թ. ________________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20  թ. _________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված Պայմանագրի առարկաները.

| Պայմանագրի առարկայի | | |
|---|---|---|
| անվանումը | Չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված 3*
*« 21 » հունիսի 2018 թ. կնքված*
*N «ՆՄՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10» ծածկագրով պայմանագրի*

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 46
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ\Հ 1570017878010100
ՀՎՀՀ 02240041

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«22» հունիսի 2018թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Ապրանքի մատակարարման և դրան ուղեկցող ծառայության մատուցման գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «21» «հունիսի» 2018թ.
Պայմանագրի համարը՝ N «ՆՄՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10»
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «21» «հունիսի» 2018թ. դուրս գրված N Բ 3467527809 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ Պայմանագրի առարկաները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Շարժիչի յուղ,1լ. 5w40 Զիգ ֆուլ սինթետիկ | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 10.0 | Հուլիս 2018թ. |
| 2 | Ավտոմեքենայի պահեստամասեր-օդի զտիչ | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 15.0 | Հուլիս 2018թ. |
| 3 | Ավտոմեքենայի պահեստամասեր-փեշի զտիչ | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 15.0 | Հուլիս 2018թ. |
| 4 | Դիմապակու խոզանակ, կոմպլեկտ | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 6.0 | Հուլիս 2018թ. |
| 5 | Ավտոմեքենայի պահեստամասեր-ձգան | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 17.0 | Հուլիս 2018թ. |
| 6 | Ավտոմեքենայի պահեստամասեր- | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 22.0 | Հուլիս 2018թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծգանի վերջնամաս | | | | | | | |
| 7 | Ավտոմեքենայի պահեստամասեր-կայունարարի ռետին հետևի | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 10.0 | Հուլիս 2018թ. |
| 8 | Ավտոմեքենայի պահեստամասեր-ղեկայունակի պատյան | Համաձայն պայմանագրի | 1 հատ | 1 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 5.0 | Հուլիս 2018թ. |
| 9 | Ավտոմեքենայի պահեստամասեր-համարի պլաստմասա | Համաձայն պայմանագրի | 1 հատ | 1 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 1.0 | Հուլիս 2018թ. |
| | **Ընդամենը** | | | | | | **101.0** | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

Արամ Կոստանյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«21» հունիսի 2018 թ. կնքված*
*N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10» ծածկագրով պայմանագրի*

# ԱԿՏ N 1

**Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 2018թ. հունիսի 21-ին կնքված N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10» պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2018թ. հունիսի 22-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Պայմանագրի առարկայի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| Շարժիչի յուղ, 1լ. 5w40 Զիգ ֆուլ սինթետիկ | 2 | հատ |
| Ավտոմեքենայի պահեստամասեր- օդի զտիչ | 2 | հատ |
| Ավտոմեքենայի պահեստամասեր- փեչի զտիչ | 2 | հատ |
| Դիմապակու խոզանակ, կոմպլեկտ | 2 | հատ |
| Ավտոմեքենայի պահեստամասեր-ձգան | 2 | հատ |
| Ավտոմեքենայի պահեստամասեր- ձգանի վերջնամաս | 2 | հատ |
| Ավտոմեքենայի պահեստամասեր- կայունարարի ռետին հետևի | 2 | հատ |
| Ավտոմեքենայի պահեստամասեր- ղեկայունակի պատյան | 1 | հատ |
| Ավտոմեքենայի պահեստամասեր- համարի պլաստմասա | 1 | հատ |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________
ստորագրություն

Արամ Կոստանյան
ազգանուն, անուն

Կ.Տ.

**Ընդունեց**

հայտը նախագահող ներկայացուցիչ՝

_______________
ստորագրություն

_______________
ազգանուն, անուն

Կ.Տ.

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«22» հունիսի 2018թ.

Պայմանագրի անվանում – Ապրանքի մատակարարման և դրան ուղեկցող ծառայության մատուցման գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվ - «21» հունիսի 2018թ.

Պայմանագրի համար - «ՆՄՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10»

Պատվիրատուի անվանում- ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Պայմանագրի կողմի անվանում- «ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| Հ/Հ | Մատակարարված ապրանքների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանում | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանք | քանակական ցուցանիշ | | կատարման ժամկետ | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի | փաստացի |
| 1 | Շարժիչի յուղ,1 լ. 5w40 Զիգ ֆուլ սինթետիկ | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 2 | Ավտոմեքենայի պահեստամասեր- օդի զտիչ | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 3 | Ավտոմեքենայի պահեստամասեր- փեչի զտիչ | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 4 | Դիմապակու խոզանակ, կոմպլեկտ | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 5 | Ավտոմեքենայի պահեստամասեր-ձգան | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 6 | Ավտոմեքենայի պահեստամասեր- ձգանի վերջնամաս | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 7 | Ավտոմեքենայի պահեստամասեր- կայունարարի ռետին հետևի | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 8 | Ավտոմեքենայի պահեստամասեր- ղեկայունակի պատյան | Համաձայն պայմանագրի | 1 հատ | 1 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 9 | Ավտոմեքենայի պահեստամասեր- համարի պլաստմասա | Համաձայն պայմանագրի | 1 հատ | 1 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |

*Անհամապատասխանությունները բացակայում են*

Նշումներ անհամապատասխանությունների մասին.

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ *դրական* եզրակացություն:

«22» հունիսի 2018թ. գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ Խ. Պողոսյան

անուն, ազգանուն, ստորագրություն

RA YEREVAN "NORK" CENTER ... ԵРЕВАН ЦЕНТР "НОРК" ... 02602449

Հավելված 3
« 21 » հունիսի 2018 թ. կնքված
N «ՆՄԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10» ծածկագրով պայմանագրի

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 46
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ\Հ 1570017878010100
ՀՎՀՀ 02240041

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Ջեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«22» հունիսի 2018թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Ապրանքի մատակարարման և դրան ուղեկցող ծառայության մատուցման գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «21» «հունիսի» 2018թ.
Պայմանագրի համարը՝ N «ՆՄԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10»
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «21» «հունիսի» 2018թ. դուրս գրված N Բ3384968189 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ Պայմանագրի առարկաները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Օդի զտիչի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 1.0 | Հուլիս 2018թ. |
| 2 | Փեջի զտիչի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 1.0 | Հուլիս 2018թ. |
| 3 | Զգանի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 10.0 | Հուլիս 2018թ. |
| 4 | Զգանի վերջնամասի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 10.0 | Հուլիս 2018թ. |
| 5 | Կայունարարի ռետին հետևի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 3.0 | Հուլիս 2018թ. |
| 6 | Առջևի անիվների բացքի կարգավորում | Համաձայն պայմանագրի | 1 հատ | 1 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 12.0 | Հուլիս 2018թ. |
| 7 | Հետևի անիվների բացքի կարգավորում | Համաձայն պայմանագրի | 1 հատ | 1 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. | 10.0 | Հուլիս 2018թ. |
| | **Ընդամենը** | | | | | | **47.0** | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
ստորագրություն
Արամ Կոստանյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց
ստորագրություն
Ս. Հարությունյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«21» հունիսի 2018 թ. կնքված*
*N «ՆՄԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10» ծածկագրով պայմանագրի*

# ԱԿՏ N 1

**Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 2018թ. հունիսի 21-ին կնքված N «ՆՄԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10» պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2018թ. հունիսի 22-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Պայմանագրի առարկայի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| Օդի զտիչի փոխարինում | 2 | հատ |
| Փեչի զտիչի փոխարինում | 2 | հատ |
| Ձգանի փոխարինում | 2 | հատ |
| Ձգանի վերջնամասի փոխարինում | 2 | հատ |
| Կայունարարի ռետին հետևի փոխարինում | 2 | հատ |
| Առջևի անիվների բացքի կարգավորում | 1 | հատ |
| Հետևի անիվների բացքի կարգավորում | 1 | հատ |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ստորագրություն

Արամ Կոստանյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«22» հունիսի 2018թ.

Պայմանագրի անվանում – Ապրանքի մատակարարման և դրան ուղեկցող ծառայության մատուցման գնման պայմանագիր Պայմանագրի կնքման ամսաթիվ - «21» հունիսի 2018թ.

Պայմանագրի համար - «ՆՄԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/10»

Պատվիրատուի անվանում- ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Պայմանագրի կողմի անվանում- «ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ

Վերոհիշյալ պայամանգրի շրջանակներում պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| Հ/Հ | Մատակարարված ապրանքների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանում | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանք | քանակական ցուցանիշ | | կատարման ժամկետ | |
| | | | ըստ պայամանգրով հաստատված ժամանակացույցի | փաստացի | ըստ պայամանգրով հաստատված ժամանակացույցի | փաստացի |
| 10 | Օդի զտիչի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 11 | Փեչի զտիչի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 12 | Զգանի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 13 | Զգանի վերջնամասի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 14 | Կայունարարի ռետին հետևի փոխարինում | Համաձայն պայմանագրի | 2 հատ | 2 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 15 | Առջևի անիվների բացքի կարգավորում | Համաձայն պայմանագրի | 1 հատ | 1 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |
| 16 | Հետևի անիվների բացքի կարգավորում | Համաձայն պայմանագրի | 1 հատ | 1 հատ | 01.07.2018թ | 22.06.2018թ. |

*Անհամապատասխանությունները բացակայում են*

Նշումներ անհամապատասխանությունների մասին.

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ *դրական* եզրակացություն:

«22» հունիսի 2018թ. գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ Խ. Պողոսյան

անուն, ազգանուն, ստորագրություն

"NORK" CENTER • ԵРЕВАН ЦЕНТР "НОРК" 02602449